ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենուտի կրթահամալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/35 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի փետրվարի 21-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/35 գնման պայմանագրում 2024 թվականի մարտի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 28.12.2023թ N2323-Ն և 26.10.2023թ. N 1869-Ն որոշումներ:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/35 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

21.02.2024թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/35 գնման պայմանագրի

ք. Երևան 26.03.2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Կ. Մինասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն և 26.10.2023թ. N 1869-Ն որոշումները և **ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենուտի կրթահամալիրի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 21.02.2024թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/35 գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագիրը լրացնել նոր հավելված N3-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Հիմք ընդունելով Կապալառուի առաջարկությունը՝ հաստատել Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև 12 ամսում Կապալառուի կողմից կատարելիք աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ՝ 290 000 000 ՀՀ դրամ:

1.1.3 Սահմանել, որ Համաձայնագրի շրջանակներում

1) Աշխատանքների կատարման ծավալները նախատեսվում են 12 ամսում կատարելու հաշվարկով՝ պայմանով, որ պակաս ֆինանսական միջոցների բյուջետավորումը և վճարումները կատարվում են 12 ամիսը լրանալուն հաջորդող մինչև 90 օրվա ընթացքում:

2) Պատվիրատուն՝ վճարման ժամանակացույցով սահմանված ամիսներին, Կապալառուի բանկային հաշվին փոխանցում է մինչև 66 921 596 ՀՀ դրամի չափով կանխավճար՝ համապատասխան բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի մարումն իրականացվում է ստորագրված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Համաձայնագրով 12 ամսում կատարվելիք աշխատանքների ընդհանուր գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ: Ընդ որում, եթե կանխավճարը գերազանցում է 10 տոկոսը, ապա կանխավճարի մարման ենթակա գումարի վերջին չափին ավելացվում է հետևյալ բանաձևով հաշվարկված գումարը՝

ԱԳ=ԿԾ*ՊՏ՝

ԱԳ– ավելացվող գումար,

ԿԾ– պետության կողմից տրամադրվող կանխավճարի ծավալ, որը գերազանցում է 10%–ը,

ՊՏ– պետական տարեկան պարտատոմսերի վերջին երեք տեղաբաշխումների միջին կշռված եկամտաբերության մակարդակ:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է երկու էջից, Համաձայնագրի հավելվածը կազմված է մեկ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011048742
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Վ. Ամիրյան
(ստորագրություն)
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. տ. 7
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2500010890940100
ՀՎՀՀ 08914368
Տնօրեն՝

_____ Կ. Մինասյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավ
21.02.2024թ. կնք
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/35 գնման պայման
26.03. 2024թ. կնքված N 1 համաձայն
«Հավելվա
21.02.2024թ. կնք
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/35 գնման պայման

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դր

Աշխատանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45221142/608	ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենուտի կրթահամալիրի կառուցման աշխատանքներ			23 900 600	71 701 700	71 701 700	71 701 700	143 403 400	143 403 400	143 403 400	239 005 700	239 005 700	239 005 700	239 005 700

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: »:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011048742
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ
ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փ. տ. 7
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2500010890940100
ՀՎՀՀ 08914368

Տնօրեն

_____ Կ. Մինասյան
(ստորագրություն)

Կ.Տ